ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Հոմանիշների ուսուցումը 6-րդ դասարանում

ԱՌԱՐԿԱ՝ Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ՝ Մարինե Բակունց

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Վերիշենի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Սոնա Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1. Հոմանիշների ուսուցանման կանորությունը 4

2. Հոմանիշների ուսուցման արդյունավետ մեթոդներ 5

3. Թեմատիկ միավորի նմուշ-օրինակ 8

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17

Գրականության ցանկ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցումը տևական գործընթաց է: Այն ուսուցիչ-աշակերտ փոխհամաձայնեցված շարունակական աշխատանք է:

Ուսուցման հաջողությունը պայմանավորված է դասավանդողի և սովորողների ջանքերի միասնականությամբ, ուսուցման նպատակներով ու դրդապատճառներով:

6-րդ դասարանի Մայրենիի դասագրքում բառագիտության ուսումնասիրությանը հատկացված է մի ամբողջ ուսումնական տարի: «Մայրենի 6»-ի նպատակն է խորացնել ու զարգացնել աշակերտների՝ տարրական դպրոցում ստացած գիտելիքները և կարողությունները, խթանել հետաքրքրությունը հարազատ լեզվի նկատմամբ, կատարելագործել բառերի ճիշտ և դիպուկ գործածությունը, կառուցել գրագետ ու գեղեցիկ խոսք: Անհրաժեշտ է նյութի բովանդակության յուրացման և փաստերը վերլուծելու, համադրելու կարողության մշակման միջոցով ապահովել աշակերտների լեզվական կարողությունների զարգացումը: Այս խնդիրների իրականացման համար բավական կարևոր նշանակություն ունի հոմանիշների ուսուցանումը:

Նկատի ունենալով դասվանդման մեր փորձը՝ կարող ենք փաստել, որ ընդգրկունությամբ աչքի ընկնող այս թեման աշակերտները սովորաբար դժվար են յուրացնում, ուստի թեման հիմնավոր ուսուցանելու համար կարիք կա հստակ մեթոդներ մշակելու, որով էլ պայմանավորված է սույն հետազոտության **արդիականությունը**:

Հետազոտության **նպատակն է** բառապաշարը հարստացնող միջոցների ներկայացմամբ աջակցել տվյալ առարկայի ուսուցիչներին՝ 6-րդ դասարանի աշակերտի խոսքը դարձնելու ավելի պատկերավոր, բազմազան և զերծ պահելու կրկնություններից:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- **անդրադառնալ** հոմանիշների ուսուցման կարևորությանը,

- **ներկայացնել** խնդրո առարկա նյութի ուսուցման մի քանի արդյունավետ մեթոդներ,
- **առաջարկել** հոմանիշների ուսուցման համար թեմատիկ միավորի օրինակ:

Հետազոտության օբյեկտը 6-րդ դասարանում «Մայրենի» ինտեգրված արառկայի ուսուցման գործընթացն է:

Հետազոտության առարկան հոմանիշների ուսուցման համակարգն է:

Հետազոտության համար ընտրվել և կիրառվել են դիտարկման, փորձարարական ուսուցման և վերլուծության **մեթոդները**:

1. Հոմանիշների ուսուցանման կանորությունը

«Մայրենի 6» դասագիրքը այնպես է կազմված, որ ուսուցիչը կարողանա իրականացնել աշակերտի բազմաբնույթ գործունեությունը թե՛ դասի ընթացքում, թե՛ դասից դուրս՝ արտադասարանական եղանակով ուսուցման ժամանակ:

Որպես փորձ ունեցող ուսուցիչ՝ առաջնորդվում ենք աշակերտին մշտապես որոնողի, մտածողի ակտիվ վիճակում պահելու նպատակադրումով: Որոշ դեպքերում աշակերտին ներկայացնում ենք փաստեր, հարցեր և ուղղորդում՝ ինքնուրույնաբար դրանք վերլուծելու և անհրաժեշտ եզրակացության հանգելու: Զանազան եղանակներով ձգտում ենք շարժել աշակերտի հետաքրքրությունը, սովորեցնել ինքնուրույն մտածել և աշխատել:

Մայրենիի ուսուցման բնագավառում խիստ կարևոր է նաև գործնական և ինքնուրույն աշխատանքների դերը: Ակադեմիական գիտելիքներ հաղորդելուց բացի հարկավոր է երեխաների մեջ ձևավորել այդ գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ և կարողություններ, քանի որ դրանք սովորողներին անհրաժեշտ են ամբողջ կյանքում: Աշակերտի խնդիրն է ունենալ հիմնավոր գիտելիքներ, իսկ դա գնահատվում է ոչ միայն տեսական որոշ կանոնների սերտումով, այլև գործնական վարժությունների կատարման եղանակներին տիրապետելու, հանձնարարվող նյութի

խոր ընկալման և սովորածը գործնականում՝ խոսքի մեջ, կիրառելու կարողության դրսևորմամբ: Ուսումնական նյութն ուսումնասիրող աշակերտն անպայման դրսևորում է ստեղծագործական մոտեցում և գտնում տրված առաջադրանքները հնարավորինս արդյունավետ լուծելու ստույգ եղանակներ:

«Մայրենի 6» դասագրքի շատ կարևոր բաժին է «Հոմանիշները», որը սերտորեն կապված է «Հականիշներ» և «Համանուններ» բաժինների հետ: Դասագրքով աշխատելու սկզբունքը և գործընթացը կառուցված է տեքստից դեպի բառ, բառից դեպի ինքնուրույն կապակցված խոսք օրինաչափությամբ: Բառագիտության ուսունասիրության առարկան նախ և առաջ բառն է, նրա հատկանիշները, բառային և իմաստային առանձնահատկությունները: Բառերը նախադասություններ են դառնում և խոսք ենք կազմում: Աշակերտն անընդմեջ նոր բառեր, արտահայտություններ է սովորում, խոսքի լեզվառճական կողմին է հաղորդակից դառնում, անդադար կարդում, աշխատում, քննարկում է դասընկերների հետ և բանավիճում: Այս ընթացքում զարգանում են նրա մտածողությունը, երևակայությունը, հետևաբար հղկվում և կատարելագործվում է խոսքը:

2. Հոմանիշների ուսուցման արդյունավետ մեթոդներ

Ներկայացնում ենք հոմանիշների ուսուցման մի քանի մեթոդներ, որոնք, անկասկած, հաճախ փոփոխում կամ կատարելագործում ենք դասի ընթացքում: Մեթոդն ուսուցչի համար դասավանդման, իսկ աշակերտի համար գիտելիքները, կարողություններն ու հմտությունները յուրացնելու եղանակ է: Տեսական գիտելիքների հաղորդման և գործնական հմտությունների ձևավորման գործընթացների կապն իրականացվում է կյանքից, գեղարվեստական գրականությունից վերցված օրինակներով, այս կերպ ապահովվում է նաև կրթության և դաստիարակության միասնությունը: Երբ ուսուցումը տարվում է գործնական աշխատանքի զուգորդմամբ, դառնում է ավելի հետաքրքիր և սրտամոտ: Օրինակ՝ գրատախտակին գրված են երկու նախադասություն.

ա. Երկրագնդի շուրջը պտտվում են բազմաթիվ արհեստական արբանյակներ:

բ. Գիշերային երկինքը փայլում էր բյուր աստղերով:

Աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում ենք ընդգծված բառերի վրա: Դրանք բացահայտորեն ունեն ընդհանուր իմաստ, բայց ունեն և տարբերություն: «**Վենի դիագրամ**» մեթոդով սովորողների մասնակցությամբ բացահայտում ենք դրանց նմանությունը և տարբերությունը: **Բազմաթիվն** ու **բյուրը** տարբերվում են, թեև համարվում են հոմանշային զույգ: «Հոմանիշ» թեման 6-րդ դասարանցու համար նորություն չէ, և դասարանն աշխուժորեն արձագանքում է, կազմում նոր նախադասություններ՝ օգտագործելով հետևյալ հոմանշային զույգերը՝ *կեղծավոր-շողոքորթ, գթալ- խղճալ, խաբեբա-խարդախ, աղտոտ –կեղտոտ, թակարդ-ծուղակ, խնդրել-աղերսել* և այլն:

Հարկ չկա սովորողներին շտապեցնելու, պիտի թույլ տալ, որ նրանք մտածեն, հիշողության խորքերից դուրս բերեն, վերհիշեն, կշռադատեն ու կատարեն վերոհիշյալ հարց-առաջադրանքները:

Հարց ու պատասխանով վերհիշում ենք նախորդ դասարաններում սովորածը: Այսպես՝

Ձևով տարբեր, իմաստով մոտ բառերը կոչվում են հոմանիշներ:

Օրինակ՝ գեղեցիկ-գեղանի,

անվախ-կտրիճ,

ագահ-անկուշտ,

դաժան-անգութ,

գովել-գովերգել:

Սակայն ժամանակն է նրանց սովորեցնելու, որ կան իմաստային որոշակի խմբեր, որոնք ունեն տարբերիչ հատկանիշներ: Ներկայացնում ենք, որ բառերը տարբեր հատկանիշներ ունեն և այդ պատճառով էլ դասակարգվում են տարբեր մոտեցումներով: Եթե բառերը դասակարգվում են՝ ըստ ծագման, ապա հաշվի է առնվում, թե բառը հայերենին անցել է մայր լեզվից, թե այլ լեզուներից: Եթե բառերը դասակարգվում են՝ ըստ կազմության, ապա հաշվի են առնվում նրանց

կառուցվածքային հատկանիշները, այսինքն՝ քանի արմատ կամ ածանց կա բառում: Ըստ ձևի և իմաստի փոխհարաբերության դասակարգելիս էլ հաշվի է առնվում այն հանգամանքը, թե բառերի ձևերը և իմաստները ինչ հարաբերություն ունեն: «Բառերը, ըստ ձևի և իմաստի միմյանց նկատմամբ տարբեր փոխհարաբերություններ են ունենում»[1]:

Ձևով տարբեր, բայց իմաստով մոտ բառերը հոմանիշներ են: Հոմանիշների միջոցով շատ բաներ կարող ենք արտահայտել: «Բոլորը գիտեն ուտել բառը և գործածում ենք առօրյա կյանքում: Երբ ուզում ենք արտահայտել «ագահությամբ ուտել» իմաստը խժռել բառն ենք գործածում, «հաճելի բան ուտել» իմաստի համար գործածում ենք ճաշակել բառը, իսկ լափել-ը կենդանիների համար ենք գործածում (երբեմն նաև այն մարդկանց համար, որոնք անշնորհք ու ագահաբար են ուտում)»[2]:

Հոմանիշ կոչվում են այն բառերը, որոնք արտահայտում են հիմնականում նույն ընդհանուր իմաստը, բայց իրարից տարբերվում են իմաստի նրբերանգով ու ոճական կիրառությամբ: Հոմանիշների իմաստային տարբերությունը հաճախ պայմանավորված է բնութագրվող երևույթի բուն էությամբ:

Օրինակ՝ **գեղեցիկ**, **գեղանի, չքնաղ** բառերը հոմանիշներ են, և դրանց իմաստային տարբերությամբ արտահայտվում է այն առարկաների, անձերի, երևույթների չափի տարբերությունը, որոնք բնորոշում են այդ բառերը:

Օրինակ՝ **Գեղանի** բերդակալուհին, սյունեցու նժույգի վրա նստած, ճանապարհ դրեց ուխտի զինվորներին (Մուրացան):

<u>Լքսում</u> է **չքնաղ** Թըմկա տիրուհին

Գիշեր ու ցերեկ , նորից ու նորից… (Հ.Թումանյան):

Լաց լինել և ողբալ բառերը հոմանիշներ են:

Օրինակ՝ Նայեց-նայեց սարերն ի վեր

Ճամփաներին ամայի, հույսը հատավ ու լաց եղավ (Հ.Թումանյան):

---

[1] Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ., Հայոց լեզու 10, Երևան, Էդիտ պրինտ, 2009, էջ 81:
[2] Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի 6, Երևան, Էդիտ պրինտ, 2016, էջ 48:

Սուգ եղավ գյուղում. կանայք այնպիսի ողբ բարձրացրին, որ ժայռերը զրնգացին (Խանզադյան):

Այս հոմանիշների իմաստային տարբերությունը հաճախ բխում է խոսողի վերաբերմունքից. միևնույն առարկան, հատկանիշը մեկը կարող է անվանել **գեղեցիկ**, **գեղանի**, մեկ ուրիշը՝ **չքնաղ**, մեկը՝ **լաց լինել**, մյուսը՝ **ողբալ** և այլն:

Հոմանիշները լինում են երկու տեսակ՝ **իմաստային** և **ոճական:**

«**Իմաստային** կոչվում են այն հոմանիշները, որոնք արտահայտում են նույն հասկացությունը և իրարից տարբերվում են իմաստային նրբերանգով»: Օրինակ՝

բարկություն-ջղայնություն-վրդովմունք-ցասում,

լալ-հեկեկալ-հեծկլտալ-ողբալ:

«**Ոճական** են այն հոմանիշները, որոնք արտահայտում են նույն հասկացությունը և տարբերվում են ոճական երանգով ու գործածվում են տարբեր ոճերում»[3]: Օրինակ՝

ազատվել-դուրս պրծնել,

իջեցնել- վար բերել:

3. Թեմատիկ միավորի նմուշ-օրինակ

Այս մասում կներկայացնենք թեմատիկ միավորի օրինակ:

Թեման՝ Ազնավուրը Ազնավուրի մասին. հոմանիշներ

Դասարան՝ 6-րդ

Աշակերտների թիվը՝ 26

Տևողությունը՝ 3 դ/ժ

Մեթոդներ՝ «Եռաթև աղյուսակ», «Հարցուպատասխան», «Քառաբաժան» «Վենի դիագրամ», «Բացատրություն», «Դասախոսություն».

Անհրաժեշտ նյութեր՝ դասագիրք, աշխատանքային տետր, ցուցապաստառներ

Առաջին դասաժամ. Դասի տիպը՝ նոր նյութի հաղորդման

[3] Ս.Աբրահամյան, Հայոց լեզու, Բառ և խոսք, Երևան, Լույս,1978, էջ 84:

Խթանման փուլ: Գրատախտակին գծում ենք եռաթև աղյուսակ, որից հետո՝ նաև տետրերում (տե՛ս *Աղյուսակ 1*):

1	2	3
առանցքային բառ (հիմնական բառ)	դրական վերաբերմունք (երանգավորում)	բացասական վերաբերմունք (երանգավորում)
մահանալ	վախճանվել	Սատկել
Ծիծաղել	խնդալ	հռհռալ
Երազ	անուրջ	մղձավանջ

Աղյուսակ 1: Եռաթև աղյուսակ

Իմաստի ընկալման փուլ: Երկրորդ և երրորդ սյունակների բառերով կազմում ենք նախադասություններ և համեմատում:

Կշռադատման փուլ: «Հարցուպատասխանի» մեթոդով կատարում ենք ամփոփում:

Դասարանը եզրակացնում է.

Կան իմաստային նուրբ տարբերություններ հետևյալ հոմանիշների մեջ.

բարկություն-ջղայնություն-ցասում,

լալ- հեկեկալ-ողբալ,

տատանել- ծածանել-սասանել:

Այդ տարբերությունը հաճախ դրսևորվում է հոմանիշների ցույց տված հատկանիշի չափի տարբերությամբ:

Այս հատկանիշների առաջին շարքի մեջ մտնող բառերն ունեն իմաստային հետևյալ նրբերանգները.

<u>Տատանել</u> նշանակում է առհասարակ այս ու այն կողմ շարժել (ամեն ինչ՝ ձեռք, թուղթ, դրոշ):

Ծ<u>ածանել</u> բայը տատանելի մասնավոր իմաստն ունի, նշանակում է ալիքային տարուբերել (ոչ ամեն ինչ, այլ դրոշակը, փողկապը):

Սասանել նշանակում է ցնցումով շարժել (օրինակ՝սյունը, գետինը՝ երկրաշարժից):

Իմաստային հոմանիշները երբեմն իրարից տարբերվում են հուզարտահայտչական երանգով:

Այսպիսի հոմանիշներով շեշտվում է խոսողի վերաբերմունքը.

մահանալ-վախճանվել-սատկել,

ծիծաղել-քրքջալ-հռհռալ:

Այսպես՝ հոմանիշներից **ծիծաղել**-ը տվյալ հատկանիշը, գործողությունը արտահայտում է չեզոք վերաբերմունքով, երկրորդի մեջ դրական, իսկ երրորդի մեջ արտահայտված է խոսողի հեգնական, ծաղրական վերաբերմունքը: Ուրեմն այս հատկանիշների մեջ կա թե՛ հատկանիշի, գործողության չափի տարբերության իմաստ, և թե՛ հուզաարտահայտչական երանգ:

Ցույց տալով գրատախտակին գրված եռաթև աղյուսակը՝ ամփոփում ենք, որ կա ավելի «չեզոք», ընդհանրական իմաստ ունեցող բառ. այն կոչվում է **հիմնական** բառ կամ **առանցքային** բառ:

Համոզվելով, որ բոլորն ընկալեցին նյութը, «Փոխադարձ ուսուցում», «Հարցուփորձ» մեթոդներն ենք օգտագործում: Հանձնարարում ենք տնային աշխատանք, օրինակ՝ գրել հոմանիշ բառը (բոլորն էլ բառամիջում **խ** ունեն):

ավարտ, վերջ------

հպարտ, սեգ------

կերուխում, խնջույք-------

ոչնչացնել, կործանել------

երախտամոռ, անշնորհակալ-----

կոտորած, եղեռն----

մերժել, հերքել------

Գրված բոլոր նոր բառերով կազմել նախադասություններ:

Հետևյալ բառերը խմբավորելով՝ կազմել հոմանիշների շարքեր:

Գտնել այդ շարքերից յուրաքանչյուրի հիմնաբառը:

Այսպես՝ *ահռելի, սամում, դյութիչ, գրավչություն, խինդ, անկշտում, ճգնել, խոշոր, զեփյուռ, չքնաղ, հրապուրանք, անհագուրդ, ձգտել, փոթորիկ, հոծ, գեղեցիկ, թովչանք, անկուշտ, ջանալ, ահագին, քամի, խորշել, թավ, ընչաքաղց, աշխատել, սյուք, առինքնող, անհագ, մրրիկ, գողտրիկ, հմայք, ազահ*:

Կատարման նմուշ՝ *սամում-սյուք, զեփյուռ, քամի, փոթորիկ*:

Երկրորդ դասաժամ- Դասի տիպը՝ **ամրապնդման դաս**

Տնային հանձնարարությունները ստուգելուց հետո գրատախտակին գրում ենք թերի նախադասություններ:

Խ- 1. Ծաղիկները մեղմորեն օրորվում էին իրիկնային ……ից:

2. Երեկվա …….ը քշել տարել էր խեղճ գյուղացու տան կտուրը:

Ներքևում առաջարկվող բառերն են՝ **հովիկ-զեփյուռ-քամի-հողմ-մրրիկ:**

Իր ասածները ապացուցելու համար փաստաբանը բերեց (**ծանր, ծանրակշիռ**) փաստարկներ:

Վարդանը տեղափոխեց (**ծանր, ծանրակշիռ**) կապոցները:

Նա հեծավ իր (**աշխետ, շիկակարմիր**) նժույգը:

Աշխենը հանրախանութից գնեց (**աշխետ, շիկակարմիր**) գործվածք:

Մենք մի կերպ անցանք (**թանձր, խիտ, հոծ**) բազմության միջով:

Նույնիսկ կեսօրին արևի ճառագայթները չէին թափանցում (**թանձր, խիտ, հոծ**) անտառի միջով:

Ի - Աշակերտները կազմում են բառով և դարձվածքով նույնանիշ ձևեր և որոշում դրանց իմաստային տարբերությունները, օրինակ՝ *նեղանալ և քիթը կախել, ննջել և տանձ կշռել, քնել և Մորփեոսի գիրկն ընկնել, աշխատող և քրտինքը ճակատին, նկատել և աչքի ընկնել, քծնել և աչք մտնել* և այլն:

Կ – «**Բացատրություն**» մեթոդով աշակերտների միջոցով պարզաբանում ենք, որ հոմանիշ բառերն իրարից տարբերվում են՝ ըստ երևույթի, զգացմունքի, գործողության

տարբեր աստիճանների (ուժգնության): Այնուհետև աշակերտների միջոցով կազմվում է «Վենի դիագրամ» (տե՛ս *Աղյուսակ 2*):



Աղյուսակ 2: Վենի դիագրամի օրինակ

Դաշտում վարգում է **երամակը**:

Երկնքում թռչում է թռչունների **երամը**:

Կան հոմանիշային խմբեր, որոնք անվանում են միևնույն դասի առարկաների տարբեր տեսակներ:

Խաղ-վարժություն՝ «Արտահայտիր մեկ բառով»

Դասարանը բաժանում ենք երկու խմբի, ամեն մեկին տալիս ենք նույն բովանդակությամբ թերթիկներ, որոնց վրա գրված բացատրու-թյունները աշակերտները պիտի արտահայտեն մեկ բառով, օրինակ՝ կենդանիների խմբերին տրվող անուններրոչխարների խումբ՝

կովերի խումբ,

ձկների խումբ,

գայլերի խում,

ձիերի խումբ,

մեղուներ խումբ,

աղվեսների խումբ,

սողունների խումբ:

Տրված ժամանակը լրանալուց հետո թիմերը կարդում են պատասխանները: Հաղթում է այն թիմը, որը շատ արագ և ճիշտ պատասխաններ է գրել:

Այսօրինակ խաղերը բառուսուցման, բառապաշարի հարստացման օգտակար միջոցներ են:

Ընդհանրապես ամրապնդման դասի ընթացքում կատարում ենք դասագրքի առաջադրանքները: Այստեղ կարող ենք սովորողներին աշխատեցնել կա՛մ զույգերով, կա՛մ խմբերով: Լեզվական նյութի ուսումնասիրությունից հետո գործնական աշխատանքի կազմակերպումը կօգնի դասագրքի վարժությունների ճիշտ և արդյունավետ կատարմանը: Դասագրքի 49-51 էջերի առաջադրանքները ամրապնդման նպատակ ունեն: «Ազնավուրը Ազնավուրի մասին» հատվածի առաջադրանքները խմբավորելու դեպքում կարող ենք ունենալ հետևյալ բովանդակությունը.

1.Կերպարները բնութագրող բառերի ու բառակապակցությունների, նախադասությունների դուրսգրում՝ խոսքի մեջ օգտագործելով լրացուցիչ հանձնարարականներ.

ա. Շառլի և Աիդայի,

բ. Շառլի հոր ու մոր,

գ. բժշկի և Աիդայի:

2. Հոմանիշ բառերի որոնում և օգտագործում:

3. Տրված նախադասությունների բաց թողնված բառերի տեղադրում, նախադասության ամբողջացում:

4. Բանավեճերի ու շարադրությունների նյութեր, նամակների հղում գրական կերպարներին, հեղինակին (մեր պարագայում նամակ հայտնի լեգենդին՝ Շառլ Ազնավուրին):

5. Տվյալ նյութի վերաբերյալ տրված կարծիքի կամ եզրակացության տարբերակի շարունակում, սեփական կարծիքի շարադրում և այլն:

Բացի դասագրքի վարժություններից ուսումնական գործընթացը արդյունավետ և հետաքրքիր դարձնելու համար օգտագործում ենք ուսումնաօժանդակ տարբեր գրքեր (Ռ. Նազարյանի «Մայրենին բոլորի համար», Ս.Աբրահամյանի «Հայոց լեզու– բառ և խոսք», Գ.Մկրտչյանի, Թ.Թովմասյանի, Լ.Գրիգորյանի «Հայոց լեզվի գործնական առաջադրանքների ժողովածու 5-9 դաս.»):

Բազմաթիվ հոմանիշներ գրելով և նախադասությունների մեջ օգտագործելով՝ աշակերտներն իրենք ըմբռնում են, որ հոմանիշներն ունեն գործածության ոլորտի տարբերություններ: Այդ տարբերություններն իրենք էլ տարբեր են՝ կապված ոճերի, բառի գործառական ոլորտների հետ: Նշում ենք տարբեր ոճերի պատկանող բառերի օրինակներ.

Ա. համագործածական և խոսակցական բառեր՝ճանապարհ և ճամփա, մերկ և տկլոր, այտ և թուշ, կատակ և հանաք:

Բ. Համագործածական և հնացած, հազվադեպ գործածական բառեր՝ականջ և ունկն, մայրաքաղաք և ոստան, տղամարդ և այր:

Գ. Համագործածական և գրքային, բանաստեղծական բառեր՝ծաղկել և փթթել, խելացի և ողջախոհ, կարոտ և անձկություն:

Այս առաջադրանքները կարելի է կատարել դասարանը խմբերի բաժանելով:

Հետևյալ բառերը խմբավորել՝ ըստ ոճական նշանակության և գործածության (համագործածական, գրքային, խոսակցական).

այգաբաց-լուսաբաց-ծեգ

ուղջույն-բարի լույս-բարև

ընծայել- նվիրել-բաշխել

խրախճանք-խնջույք-քեֆ

կերտել-ստեղծել-շինել

ահա-ահավասիկ-հրես

գաղթական-պանդուխտ-նժդեհ

անգութ-անագորույն-քարսիրտ

համագործածական- գրքային-խոսակցական
անգութ-անագորույն-քարսիրտ
լուսաբաց այգաբաց ծեգ

Աղյուսակ 3։ Բառերի խմբավորում՝ ըստ ոճական նշանակության և գործածության

Ճանաչողական վարժությունների հիմնական նպատակը տվյալ քերականական իրողությունը աշակերտներին ճանաչել ու հասկանալ տալն է: Այս տիպի վարժությունները կատարվում են պատրաստի տեքստերի վրա, որոնք սովորողները որևէ ձևափոխության չեն ենթարկում (տվյալ դեպքում նախադասությունները):

Սրա պարզագույն տեսակը տվյալ տեքստից այս կամ այն քերականական իրողությունը կրող բառերի փոխումն է (մեր դեպքում հոմանիշների, որոնք դասագրքի 10-րդ առաջադրանքում ներկայացված են կարմիր գույնով):

Թեմայի ուսուցման ժամանակ բոլոր դասերին կիրառելի է *քերականական վերլուծություն* վարժության տեսակը, որը կատարվում է գեղարվեստական գրականությունից վերցված տեքստի վրա:

Քերականական վերլուծություն կատարվում է պատրաստի տեքստի վրա, որը վերցված է լինում գերազանցապես գեղարվեստական գրականությունից: Այն ըստ ծավալի լինում է մասնակի և ընդհանուր, ըստ խորության՝ թերի և լրիվ: Անցկացնում ենք մեծ մասամբ բանավոր:

Այդ վերլուծությունները կարող են ուղեկցվել համապատասխան բացատրությամբ, հիմնավորմամբ, որոնք նպաստում են սովորողի դատողության զարգացմանը:

Քերականական վերլուծությունը, որպես վարժության տեսակ, գնահատելի է նրանով, որ կիրառելի է դասի տարբեր փուլերում՝ տնային աշխատանքների ստուգման, ուսուցանող բացատրական ու նախազգուշական թելադրությունների անցկացման և ինքնուրույն աշխատանքի կազմակարպման ժամանակ:

Հոմանիշների ուսուցման ժամանակ տեղին է նաև կիրառել նախադասությունը ընդարձակելու որոշ հոմանիշ բառերով, հոմանիշ բառակապակցություններով:

Երրորդ դասաժամ

Դասի տիպը՝ **ամփոփման դաս**

Որպես դիդակտիկ նյութ՝ օգտագործում ենք նկարներ, գեղարվեստական ծանոթ ստեղծագործություններ, նախադասության գծապատկերներ:

Օրինակ՝

1. Դիտել Մարտիրոս Սարյանի «Աշնանային ծաղիկները և մրգերը» նկարը (զետեղված է դասագրքում) և տրված պարզ համառոտ նախադասությունները ընդարձակել հոմանիշներով:

2. Ընդարձակ լրացումը դարձնել բազմակի և կետադրել:

3. Տվյալ նախադասությունը ընդարձակել՝ ըստ տրված գծապատկերի:

Նկարը միասին դիտում ենք դասարանում: Առհասարակ, կարևոր են նկարների շուրջ տարվող զրույցները, որովհետև նախ՝դրանով են սկսվում սովորողի խոսքի զարգացման ուղղությամբ աշխատանքները, և երկրորդ՝ այդ աշխատանքի ընթացքում աշակերտները սովորում են կառուցել խոսք բոլոր տեսակներով (պատմողական, նկարագրական, դատողական): Նկարի շուրջ իրականացվող զրույցները հարմար են ոչ միայն կազմակերպական իմաստով. նկարի միջոցով սովորողները ձեռք են բերում նաև մշակույթի այդ տեսակը հասկանալու ունակություն, նկարագրական արվեստով հետքրքրվելու ձգտում:

Խթանման փուլ: Այս փուլում փորձում ենք հասկանալ նկարի բովանդակությունը: Սովորողները տարբեր կարծիքներ են հայտնում, փորձում մեկնաբանել ընդհանուր տրամադրությունը (գեղեցիկ է, ուրախ է, գույների հրավառություն է) և բովանդակությունը՝ ներկայացնել գեղարվեստորեն:

Ուսուցչի օգնությամբ սովորողները նկատում են ոչ միայն նկարի ընդհանուր մակերեսը, այլև վերարտադրում են նկարում պատկերվածն ամբողջությամբ:

Իմաստի ընկալման փուլում «Զրույց» մեթոդով սովորողներին տրվում են հարցեր.

Ի՞նչ տրամադրություն ունեն ծաղիկներն ու մրգերը:

Ինչո՞ւ եք այդպես կարծում:

Կարո՞ղ են ծաղիկները մտածել, տխրել, ուրախանալ:

Եթե կարող եք, նկարագրեք ծաղիկներն ու մրգերը այդ տեսքով:

Այս աշխատանքին փոխարինող տարբերակ է նաև ստեղծագործական թելադրությունը (հոմանիշ բառերով կամ բառակապակցություններով նախադասություն կազմելով):

Կշռադատման փուլ: Հանձնարարում ենք համառոտ շարադրություն, որը կարևոր և բարդ աշխատանք է վարժությունների ընդհանուր համակարգում: Սովորողները շարադրություն գրելիս վարժվում են սովորած քերականական գիտելիքները գործնականում կիրառելու մեջ և ձեռք են բերում իրենց մտքերը գեղեցիկ ու արտահայտիչ լեզվով շարադրելու կարողություններ: Շարադրություն գրելիս աշակերտը ինքն է ընտրում, հորինում ամեն ինչ՝ և՛ բովանդակությունը, և՛ մտքերը. ուսուցիչը տալիս է միայն շարադրության թեման և որոշ բացատրություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ վստահ կարող ենք պնդել, որ աշակերտի բառապաշարի հարստացման գործում անգնահատելի նշանակություն ունի հոմանիշների ուսուցումը, և կարծում ենք, որ գործընթացի հաջող կազմակերպման համար առաջարկվող բոլոր մեթոդները, վարժությունները կարող են իրապես օգտակար լինել սովորողի խոսքի զարգացման և գիտելիքների ամրապնդման ու խորացման առումներով:

Գրականության ցանկ

1. Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի 6, Երևան, Էդիտ պրինտ, 2016:

2. Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ., Հայոց լեզու 10, Երևան, Էդիտ պրինտ, 2009:

3. Աբրահամյան Ս., Հայոց լեզու, Բառ և խոսք, Երևան, Լույս, 1978:

4. Մկրտչյան Գ., Թովմասյան Թ., Գրիգորյան Լ., Հայոց լեզվի գործնական առաջադրանքների ժողովածու, Երևան, Մանմար, 2011: